ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Չի անցնում օր Արցախում առանց ռմբակոծումների, աւազակային յարձակումների, առեւանգումների։ Վերջին լարուած օրերի ընթացքում տեղի են ունեցել հետեւեալ միջադէպերը։

22 Ապրիլի.-Առաւօտեան երեք զրահամեքենաների կողմից գնդակոծուել է Մարտունաշէն գիւղը։ Զրահամեքենաները այնուհետեւ շարժուել են Գետաշէնի կողմը։ Ընդառաջ գնացած գիւղի ղեկավարութիւնը բանակցութիւնների մէջ է մտել զինուորականների հետ։

Նոյն օրը հրապարակուել է հետեւեալ նամակը։

ԳԵՏԱՇԷՆԻ ԵՒ ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

Պրեզիդենտ Գորբաչովին,
Պաշտպանութեան Նախարար Եազովին

Սովետական բանակի մէկ մոտոհրաձգային գումարտակ փոխգնդապետի եւ մէկ մայորի ղեկավարութեամբ, որը տեղակայուած էր Գեանջայում, այժմ Ղուշչի Արմաւիր գիւղում, Ապրիլի 21ին տանկից հրանօթային կրակ է բացել (մարտական գլխիկներով) Գետաշէն գիւղի վրայ, արկերի պայթիւնից կան փլուզումներ։ Գետաշէն գիւղի ներքին թաղի կենտրոնում ոչնչացուել է ակումբի շէնքը, օրերով երկու գիւղերի վրայ զինուորական ուղղաթիռներով իրականացւում են օդային ահաբեկիչ, խուզող թռիչքներ, ընդհուպ 10 մետր բարձրութեամբ։ Ապրիլի 21ի երեկոյեան եւ ամբողջ գիշեր, սովետական բանակի «պանծալի» զինուորները յաղթարշաւ են կատարել, աւտոմատային կրակահերթերով ահաբեկելով Մարտունաշէն գիւղի ազգաբնակչութեանը։ Ապրիլի 22ի առաւօտեան բանակային տեխնիկան շարժուել է դէպի Գետաշէն գիւղը, առանց տեղեակ պահելու տեղական գիւղական խորհրդին, նպատակ ունենալով անջատել վերը նշուած գիւղերը իրարից (կրկնւում է Ազատ, Կամո գիւղերի պատմութիւնը), բայց պատահականութեամբ ձախողուեցին սովետական բանակի կողմից մշակուած պլանները։ Տանկը, սահելով լանջից, շուռ է եկել։ Վերը նշուածից ելնելով, բանակային սպաները ինքնագլուխ չեն գործում։ Նրանք յայտարարեցին, որ կատարում են հրաման։ Հրաման վերին դռնից. ելնելով անցեալի փորձից շարունակում է կրեմլեան քաղաքականութիւնը՝ հայաթափել Արցախը։ Ժամանած բանակի ստորաբաժանումը կազմուած է 20 մարտական թրթռուրաւոր զրահամեքենաներից, 9 Տ-72 տանկերից, բոլորը սպառազինուած մարտական գլխիկներով, կան լուսանկարչական փաստաթղթեր։

Կրեմլի եւ Բաքուի բարբաջող ու «մարդասէր» քաղաքականութիւնը յանգեցնում է նրան, որ անջատել են էլեկտրաէներգիան եւ ամենակարեւորը՝ ջուրը, ամբողջ գիւղի ջուրը։

Երկու գիւղերի անունից պահանջում ենք նիւթը հրապարակել մամուլում որպէս բաց հեռագիր, ուղղուած պրեզիդենտ Գորբաչովին, պաշտպանութեան նախարար Եազովին, ընթերցել հայկական դեպուտատի կողմից ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդում եւ Հայաստանի Գերագոյն Խորհրդի նիստում»։

Երկու գիւղերի ժողովրդի անունից նամակը ստորագրել են տեղի ղեկավարները։

22ի լոյս 23ի գիշերը անջատուել է Գետաշէնի էլեկտրականութիւնը եւ մինչեւ առաւօտ զօրքի կողմից գիւղը ռմբակոծուել է։

Ապրիլի 23ի վաղ առաւօտեան հրթիռներով հարուածուել է Շուշի քաղաքը։ Հրաձգութեան հետեւանքով 2 բարձրայարկ շէնքեր լուրջ վնասուել են։ Ըստ Ադրբեջանի պաշտօնական հաղորդագրութեան, զոհուել է մէկ ազերի։

Նոյն օրը, ժամը 15ին Ստեփանակերտի քաղաքային ռադիոցանցով եթեր է դուրս եկել «Ազատ Արցախ» գաղտնի ռադիոկայանը՝ հրապարակելով «Ղարաբաղի Ազատութեան Մարտիկներ» կազմակերպութեան հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Ապրիլի 23ին վաղ առաւօտեան մեր հարուածների թիրախը դարձաւ Շուշի քաղաքը։ Այս հարուածներն ունեն նախազգուշական բնոյթ՝ ընդդէմ Գետաշէնում կատարուող հակահայ քայլերի։

Այսուհետեւ Ադրբեջանի իշխանութիւնների եւ զօրքի՝ Գետաշէնի հայերի դէմ իրաքանչիւր գործողութեան ի պատասխան հրզօր հարուածներ է ստանալու Շուշի քաղաքը, կրելով մարդկային ու նիւթական կորուստներ։ Նոյն ճակատագրին են արժանանալու նաեւ այն սպաները, որոնց ձեռքերը կ'արիւնոտուեն անմեղ հայի արիւնով։

Թշնամին պիտի համոզուած լինի, որ ոչ մի հակահայ քայլ անպատասխան չի մնայ, որ Շուշին անպայման կը բաժանի Գետաշէնի ճակատագիրը»։

Յայտնի է դարձել Անդրկովկասի զինուորական տարածքի ռազմաօդային ուժերի հրամանատար Ա.Պ.Արխարովի հրամանը, որով արգելք է դրւում ԼՂԻՄ, Շահումեան եւ Գետաշէն՝ ուղղաթիռների թռիչքների վրայ։

Նոյն օրը Գետաշէնի ժողովուրդը դիմել է Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդին, Նախարարների Խորհրդին նամակով։

Ժամը 12ին ազերի ելուզակները Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղի մերձակայքում սպանել են գիւղի 82ամեայ անասնապահ Սէյրան Խաչատրեանին, ծեծել ու կապտել են նրա 15 տարեկան թոռանը եւ 22 կովն ու մէկ ձին քշել են դէպի Քելբաջարի շրջանի Խնկաշէն գիւղ։

Մարտակերտի շրջանի Ղազանչի գիւղից ազերի անասնագողերը տարել են 120 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն։

25 Ապրիլի.-Մարտակերտի շրջանի Արծուաշէն եւ Կարմրաւան գիւղերի արանքում ՕՄՕՆականները կանգնեցրել են Մարտակերտի բնակիչ Սուրէն Յարութիւնեանի ԳԱԶ-21 աւտոմեքենան եւ առեւանգել են նրան։

Ինչպէս հաղորդուել է Գետաշէնից, ադրբեջանական գիւղերը ռուսական զօրքերի հսկողութեամբ սկսել են զարնանացանը։ Երբ հայկական գիւղերն են փորձում դաշտ դուրս գալ, ՕՄՕՆականները անմիջապէս կրակ են բացում։

Ապրիլի 25ին, ժամը 13ին Շուշիի կողմից գնդակոծութեան է ենթարկուել Ստեփանակերտի Հայքաւան թաղամասը, ինչպէս եւ Քարինտակ գիւղը։ Քարինտակ գիւղում կայ 1 վիրաւոր։

26 Ապրիլի.-Երեկոյեան ժամը 21ին Դափանլուի կողմից յարձակման է ենթարկուել Կարմիր Աւան գիւղը։ Ազերիները գողացել են 1 տրակտոր եւ հեռացել։

Կապի բացակայութեան հետեւանքով՝ բժշկական օգնութեան բացակայութեամբ Գետաշէնում մահացել է 5ամսական մէկ երեխայ։

Մանաշիդում սպանուել է գիւղի հովիւը։

Գետաշէնի շրջակայքում զօրքը կատարում է անհասկանալի տեղաշարժեր։ Մէկ նա է հարուածում հայկական գիւղերին եւ մէկ էլ, թիկունք դառնալով, ասպարէզը տրամադրում է ՕՄՕՆականներին։ Մի բան յստակ է, որ Մոսկուայի հովանաւորութեամբ ԽՍՀՄ զօրամիաւորումներն ու ազերիները փորձում են կարճ ժամանակաընթացքում հայաթափել Գետաշէնը, մերձակայ գիւղերը, Շահումեանի շրջանը։ Հաւանաբար այս նենգ գործարքի իրականացումը դիւրացնելու, ինչպէս եւ Հայաստանի վրայ ճնշում բանեցնելու նպատակով Ապրիլի 26ին, ինչպէս եւ 26-27ի գիշերուայ ընթացքում ոչ մեծ մասշտաբի յարձակումներ են իրականացուել նաեւ Հայաստանի շրջանի մի քանի կէտերում։

Եթէ դէպքերի ընթացքի մէջ կտրուկ փոփոխութիւններ չկատարուեն, ապա անխուսափելի է հենց այս օրերին աշխարհից կըտրուած Գետաշէնի հայաթափումն ու կործանումը, ինչպէս եւ մեզ նահանջի նոր դիրքեր շպրտելը։

ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի գիտարարների ակումբը (ԿԻԱՆ) իր մոսկովեան համաժողովում, որը տեղի ունեցաւ Ապրիլի 22ին, լսելով եւ քննարկելով «ԿՐԻԿ»ի համանախագահ Անդրէյ Նիւկինի զեկուցումը ԼՂԻՄում ստեղծուած իրավիճակի վերաբերեալ, նշեց, որ Խորհրդային Միութիւնում ազգամիջեան ողբերգական ընդհարումները կենտրոնի «բաժանիր, որ տիրես» քաղաքականութեան արդիւնք են։

Համաժողովի մասնակիցները իրենց վրդովմունքն արտայայտեցին ԼՂԻՄից եւ նրան յարող հայաբնակ շրջաններից հայերի բռնի տեղահանմանն ուղղուած գործողութիւնների նկատմամբ եւ պահանջեցին անյապաղ դադարեցնել մարզում ժողովրդագրական իրավիճակը փոխելու քաղաքականութիւնը։

Հաշուի առնելով ԽՍՀՄ սահմանադրութիւնը եւ ստանձնած միջազգային պարտաւորութիւնները՝ ԿԻԱՆը պահանջ ներկայացրեց ԽՍՀՄի ղեկավարութեանը ԼՂԻՄի տարածքից դուրս բերել ազերի ՕՄՕՆականների եւ զրահայինների ջոկատները, կտրականապէս արգելել խորհրդային բանակին՝ միջամտել ազգամիջեան առճակատումներին, ԼՂԻՄում վերականգնել խորհրդային իշխանութիւնը, վերացնել մարզի շրջափակումը։

Այս համաժողովին ներկայ էին աւելի քան 45 գիտական ինստիտուտների ներկայացուցիչներ։

Վերջերս Բաքուում կայացաւ 9 հայորդիների դատավարութիւնը։ Նրանք մեղադրւում են անցեալ տարուայ Սեպտեմբերին Ֆիզուլու շրջանի Դիւանլար գիւղում «զանգուածային անկարգութիւններ, հրկիզումներ եւ աւազակութիւններ» կատարելու մէջ։



Լուրերը վերցուած են
Հ.Յ.Դ. Մամլոյ եւ
Տեղեկատու Կենտրոնից